

ճաղ»ըներու կազմակերպութիւնը անգնահատելի գործ կատարեց այս առթիւ, որ մինչեւ հիմա ալ կը շարունակէ իր տենդազին աշխատանքը, Պոլսէն մինչեւ յետին գաւառներու անկիւնները:

Այս տարուան Մարտ ամսուան վերջին շարժումն, Պոլսոյ մէջ տօնուեցաւ քիւրք օճաղըներու հիմնարկութեան 17-րդ տարեգարծը: Ներկայ էին կրթական գործավար Նէճաթի պէյ, Հազըր Շինասի փաշա, Բուշէն Էշրէֆ, մեծ բանաստեղծ Ապտիւլ Հազը Համիտ, ազգային քերթող Մէհմէտ Էմին, Նէճաթատին Սատրղ, Թիւրք օճաղըներու ընդհ. նախագահ Համաուլլահ Սուպի պէյեր, Պոլսոյ կուսակալը, քաղաքապետը եւն., Հունգարիոյ դեսպան Թահի եւ այլ Թուրք ու օտար ղէմքեր:

Այս հանդէսին մէջ Օճաթի նախագահուհի Նաբէհ հանըմ ճառ մը խօսելով ըսաւ.

«1908-ի յեղափոխութենէն վերջ, մեր քանի մը մտաւորականներու ուղեղին մէջ փայլատակող նուիրական եւ ազատարար կրակը նախ ի յայտ եկաւ «Թիւրք Տէրնէկի»ի եւ «Թիւրք Ետրտու»ի ձեւին տակ, եւ ի վերջոյ երիտասարդներու սիրտին մէջ բռնելով վառեց «Թիւրք Օճաղը»ն: Առաջին անգամ պաշտօնապէս Թիւրք օճաղըի հիմը դրուեցաւ 1912 Մարտ 25-ին. ազգային այս մեծ ղէպը իր կարեւորութեան հետ անհամապատասխան լրտութեան մը մէջ տեղի ունեցաւ: Տրվան Եօլուի խոնարհ ձեղունին տակ վառուած կրակին բոցերը 16 տարիներէ ի վեր հողիէ հողի փոխանցուելով, ամբողջ ազգին նոր եւ տաք հաւատք մը ներշնչեցին: Մեր հետապնդած ճամբան լուսաւոր պողոտայ մըն է: Մեր իտէպլը Թուրքին բարձրացումն է: Աղբաւէր ենք: Թուրք հանրապետութեան իտէպլները Թիւրք Օճաղըներունն ալ են միանգամայն: Այս իտէպլներուն զիտական, մշակութային եւ ընկերային մարդերուն մէջ տարածման ու ծաւալման համար կ'աշխատինք: Թուրքին մշակոյթի եւ հաւատքի այս հիմնարկութիւնը, որ արթուն եւ երիտասարդ անդամներ ունի, իր մեծերուն եւ քաղաքակիրթ աշխարհին առջեւ տօնելով իր 17 տարեկանը թեւակոխելը, ինքզինքը երջանիկ կը զգայ»:

Տիգրանակերտի Թիւրք Օճաղըն, Մարտ

21-ին 300 հոգինոց հացկերոյթ մը տուաւ ի պատիւ Արեւելեան Նահանգներու Ա. շրջանակի ընդհ. քննիչ Բպրահիմ Թալի պէյի: Հացկերոյթին մասնակցեցան Տիգրանակերտ գրանըւող կուսակալները, զօրաբանակի հրամանատարներ, ընկերութեանց ներկայացուցիչներ եւն.:

Հալիմ ձէպտէթ պէյ, Թիւրք Օճաղըին անունով կրակոտ ճառ մը խօսելով կը յայտնէր.—

«Թուրքին երեք աղբիւրէն հոսող ուժը մէկ հունի մէջ կը հաւաքուի: Ան ունի Թուրքիա կոչուած Մուսթաֆա Քեմալ մը, հայրենիքը զիտցող սպայ մը, յաղթանակ ճանչցող բանակ մը»:

Ուրիշներու կարգին Վանի կուսակալ չէրքէզ Պէքեր Սամի պէյ կը շեշտէր.— «Պիտի յաջողիք, Թալի պէյ էֆէնտի, որովհետեւ ձեզի հետ է երիտասարդ եւ զիտակից հաւատքը»:

Նոյնքան հետաքրքրական էր Թիւրք Օճաղըներու 16-րդ տարեգարծին շուրջ, անցեալ տարի, Փայիհ Բըֆղըբի զբաժ մէկ խմբադրականը («Մելլէյէթ» 2 Մայիս 1927).—

«... Հանրապետութիւնը պիտի հիմնաւորուի բոլոր լուսաւորեալ եւ գործունեայ տարրերու մշտական գործակցութեամբ: Ոչ մէկ կասեա՞ծ՝ որ հիմնաւորման պայքարին մէջ ամենէն աւելի մեր կռիմած տարրը «Թիւրք Օճաղը»ին համախմբուած, լուսաւորեալ ու գործունեայ երիտասարդութիւնն է»:

Այս մանր-մունր մէջլերումները աւելի պերճախօս են՝ քան եւրոպացի սա կամ նա ճամբորդին ու դիւանագէտին եւ մանաւանդ հայ հրապարակագրին հաւաստումները, որոնք զո՛ւր տեղը կը ժխտեն Թուրք հայրենիքի զոյութիւնը, Թրակիայէն մինչեւ Ախուրեան երկարաձգուած, — հայրենիք մը՝ որուն երբեմնի կայսերական պետութեան մեծութիւնը չունենալը զժբխտութիւն մը պէտք է համարել հայերուս համար, որովհետեւ նախընտրելի էր որ 14 միլիոննոց թրքութիւնը աւելի խոշոր տարածութիւններ պաշտպանելու հողերը քաշէր եւ իր ամբողջ ուժով ու կատաղութեամբ այսօրուան հողամասը փրկելու տենդէն ու տենչանքէն